Հայաստանի Հանրապետություն
«ԱԼՏ»
Հեռուստաընկերություն ՍՊԸ

REPUBLIC OF ARMENIA
LLC TV MEDIA
,,ALT,,

27.09.2019թ. ք. Արմավիր

ՀՀ Էկոնոմիկայի նախարար՝
Տիգրան Խաչատրյանին

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի Նախարար,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 և 51 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ՝

2017-2019թթ ընթացքում, ըստ տարիների, գյուղատնտեսության ոլորտում, Պետական օժանդակության ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետությունում ծրագրից օգտված շահառուների քանակը և օժանդակության ծավալը դրամական արտահայտությամբ:

Մասնավորապես ակնկալվող տեղեկատվությունը վերաբերում է՝

- «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագրին,
- «ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման» ծրագրին,
- «ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրին:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը)

Հ. Գ. Սեպտեմբերի 28-ը Տեղեկատվության ազատության միջազգային օրն է:

Կանխավ շնորհակալություն

«ԱԼՏ» Հեռուստաընկերություն ՍՊԸ
Խմբագիր՝ Անժելա Ստեփանյան
Հեռ. +37493344416